ՀԱՄԱՍՏԵՂԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սփյուռքահայ գրականության ամենանշանավոր դեմքերից մեկի՝ Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895-1966) երկերում ներդաշնակորեն ծուլվեցին Սփյուռքի հայ գրականության Կարոտի ու Նահանջի հոսանքները: Ճիշտ է, քաղաքական-կուսակցական ինչ-ինչ պատնեշներ հայության ստվար մի զանգվածին բաժանում էին հայրենիքից, բայց Համաստեղի գրականության մեջ կա, իսկ 30-ականներից սկսած ավելի է նյութականանում Հայաստան երկիրը:

Համաստեղի գրական առաջին փորձերը՝ բանաստեղծություններն ու մանրապատումները, կրում էին Սիամանթոյի մտածողության և ոճի կնիքը, հատկապես՝ ծանոթ խորհրդանշական պատկերների մեջ: Մանրապատումների խայտաբղետ պատառիկների լեզուն, ոճը, գույները այլ նրբերանգներ ունեն գյուղը պատկերող «Նկարներ»[1] շարքում, որտեղ բացվում է գյուղական կյանքի համայնապատկերը: Սա արդեն Համաստեղ գրողի մեզ ծանոթ աշխարհն է, որը կա, գոյություն ունի՝ որպես շոշափելի իրականություն, որտեղ ապրում ու գործում են գրողն ու իր հերոսները: Սա սոսկ հիշողություն չէ, այլ Բոստոնի մի անկյունում հարատևող աշխարհ՝ աշխարհից հեռու, աշխարհից դուրս, սակայն կենդանի ու շոշափելի: Սկսնակ գրողը աչքի էր ընկնում բառի նուրբ զգացողությամբ, և բանաստեղծ Համաստեղը տարիների ընթացքում նախապատրաստեց արձակագրի շռնդալից մուտքը հայ գրականություն:

«Գյուղը»[2] և «Անձրև»[3] պատմվածքների ժողովածուները հաստատեցին հայ դասական գրականության ավանդույթների կենսունակությունը: Համաստեղի մասին իր բառերով կարելի է ասել, որ նրա գրականության թեման նորություն չէր: Նորությունն ասելու ձևն էր՝ ինքնատիպ լիրիզմը, կարոտով թաթախված բառը, թրթռուն պատկերը և անվերջ շարժումը, որն սկսվում է հայրենի ծփուն արտերից ու ծավալվում մինչև օտար քաղաքների փողոցները:

«Անձրև» ժողովածուի շուրջը ծավալված գրական վեճը, որի սկիզբը Հր. Բալույանի հոդվածն էր «Զվարթնոց» հանդեսում,[4] սոսկ Սփյուռքի հայ գրակա-

նության «գյու՞ղ, թե՞ քաղաք» թեմատիկ որոնումների խնդրի քննությունը չէր, այլ նաև այդ գրականության ապագայի հարց: Հակառակ մռայլ կանխատեսումների, գավառական գրականությունը հաստատեց գոյության իր իրավունքը: Պատճառները շատ էին, բայց նշենք դրանցից երկուսը՝ հողի և հողագործի պաշտամունքը, որ վեր է ազգային նեղ շրջանակներից ու հասնում է մարդու իդեալին, ինչպես նաև արմատից յաթաղանահարված մի ողջ ժողովրդի բեկորներին ապրելու և գոյատևելու հույս ներշնչելու պատմական առաքելությունը: Գրողը ներկայացնում է իրական գույներով երազային մի բնաշխարհ: Լեռնաշխարհի վրայով փոթորիկ է անցել, գյուղաշխարհի տերերին ցրել աշխարհով մեկ, բայց աշխարհի տարբեր քաղաքներում հայտնված հայ մարդիկ շարունակում են «ապրել» հայրենի գյուղում: Համաստեղը պատկերում է գյուղը, որպես կորցրած մանկության հեքիաթ, հիշող մարդկանց, որոնց երակներում հոսում են արյան կանչ դարձած հողի ուժն ու կարոտը:

Համաստեղը լավ գիտեր այդ գյուղի կյանքն իր խնդիրներով, բայց հավերժացնում է աշխատանքի, արարման թագավորությունը: Գյուղը թևավորում է հայի հոգին, և երազն ու իրականությունը ձուլվում են հեքիաթի մեջ: Նրա հերոսները հայի հավաքական տիպեր են՝ հող ու հայրենիք երազող, աշխարհի չարից ու չարիքից դառնացած, բայց հոգու խորքում բարի ու մարդասեր: Համաստեղի գյուղացիները կեցության հարցերի քննությամբ չեն զբաղվում, գոհ են, որ կան, ապրում են, հիշում ու դյուզացնավեպի նման պատմում են առանձին «չարագործների» արարքները՝ հարևան ժողովուրդների մեջ փնտրելով իրենց նման հողագործին: Սակայն իրականությունն այլ էր, դեպքերի ընթացքը՝ գրեթե անկանխատեսելի:

Պատմվածքի ժանրում բազմաթիվ են գրողի գլուխգործոցները՝ «Տափան Մարգար», «Երնեկ այն օրերուն», «Չալո», «Երանոս աղբար», «Փիլիկ աղբար», «Զոհը Կար ամուն էր», «Համբույր», «Կապույտ հուլունքը», «Միջո», «Զրույց շունի մը հետ», «Աղավնիները» և այլն: Այս ստեղծագործությունների վարակիչ լիրիզմը, յուրահատուկ դրամատիզմը համակում են ընթերցողին, նրան դարձնում «յուրային»: Գրողը հայի մեջ տեսնում է համամարդկայինի ու ազգայինի յուրահատուկ միասնություն. տառապանքն է մարդուն, ազգին վեհացնում, մոտեցնում երկնքին: Իսկ մեր ազգային նկարագիրն անբաժան է

տառապանքից: Հուշը, կարոտը, կորստի ցավը երանգավորում են անցյալն ու անցած մարդկանց, բայց չեն խաթարում իրականության շոշափելի պատկերը:

Հեղինակը մասնակցում է գործողություններին, միշտ կանգնած է իր հերոսների կողքին, սիրում է նրանց ու ամեն ինչ անում, որ ընթերցողն էլ սիրի նրանց: Այդ սերը դիմացել է տարիների փորձությանը, որովհետև նրանցից շատերը դարձել են հուշ, հիշողություն: Ճիշտ է, Համաստեղի հերոսներից շատերը միջավայրի զոհերից են, բայց գրողը միջավայրի և հերոսների հակադրությունը չի շեշտում՝ ուշադրության կենտրոնում պահելով ավելի շատ հոգեբանական հարցերը: Հակադրությունը կյանքի գործող, ամեն ինչ կանխավ որոշող օրենքների ու հերոսների՝ երազով ապրելու ցանկության անհնարինության միջև է: Համաստեղի գրականության մեջ «չար» հերոսներն էլ զոհեր են, և գրողի խոսքը ներծծվում է ցավի, կորստի անկրկնելի զգացողությամբ, որը երկար ժամանակ ուղեկցում է ընթերցողին: Նրա գրականության մեջ չկա գյուղացու բացասական տիպ, քանի որ գրողը հավերժացնում է հայ գյուղը՝ աշխատանքի, արարման, հավատի ու երկնային բարության թագավորությունը:

Հայը հայտնվեց աշխարհի տարբեր ծայրերում, բայց շարունակեց ապրել հողի կարոտով, հողի կանչով: Համաստեղի՝ Ամերիկայում ապրող հայ հերոսները խեղճ են ու կրավորական, շրջապատողների համար՝ պարզապես ծախողակներ, այնինչ այդ նոր աշխարհում նրանց գրեթե ոչինչ չի հետաքրքրում, իսկ կյանքը սոսկ գոյություն է՝ անիմաստ ու տաժանակիր: Սփյուռքահայության բնակության վայր դարձած աշխարհի օրենքների քննությունը բարոյական չափանիշներից միայն ճամարտակող ու դաժան աշխարհից մարդուն, անկախ ազգային պատկանելությունից, պաշտպանելու, պահպանելու նպատակ ունի: Այլ խոսքով՝ աշխարհը Համաստեղին հետաքրքրում է սոսկ նրանով, որ հայը հարկադրված է գոյատևել այդ աշխարհում, մինչև բնօրրան վերադառնալը: Երազից մինչև հայրենի հող վերադառնալու ճանապարհին գերխնդիրը ազգային (որ նույն մարդկայինն է) նկարագիրն անխաթար պահելն է:

Համաստեղ գրողի կռիվն աշխարհի դեմ է, ավելի ճիշտ՝ աշխարհի՝ ուժի առաջ (գրողի համար՝ նույն է, թե չարի ու չարիքի) խոնարհման հին ու կործանարար սկզբունքի դեմ: Բարու և չարի աստվածաշնչյան

հակամարտությունը (նաև «Սպիտակ Ձիավոր» դյուցազնավեպում) արարող մարդու և արարումից իրեն ուժի օրենքներով օտարած մարդակերպ էակի հակադրությունն է: Այս ստեղծագործություններում միջավայրն ընդհանրացած է՝ աշխարհ, որը մարդուն տրված է արարման համար, բայց պարբերաբար դառնում է պատերազմի թատերաբեմ: Համաստեղին հետաքրքրում են այդ հակամարտության ամենօրյա դրսևորումները, երբ համընդհանուր չարի ու չարիքի ուժը ճզմում ու հաշմում է անհատներին՝ կյանքը դարձնելով դժոխային տառապանք: Եվ քանի դեռ մարդը չի վերանայել ուժի իրավունքով հիմնավորված իր չափանիշները ու չի կողմնորոշվել հոգևոր անանցանելի արժեքներով, նրա կյանքում (ուրեմն նաև աշխարհում) ոչինչ չի փոխվի դեպի լավը: Ապրելու գաղտնիքը, բանալին կորցրած մարդուն օգնելու միտումն է թելադրում Համաստեղին նյութի որոնումները մեծ քաղաքի փողոցներում, Ամերիկա կոչվող օտար աշխարհում:

Ամերիկյան միջավայրում են ծավալվում նաև Համաստեղի «Քրիստոսի երկրոդ գալուստը»[5] դրամատիկական ստեղծագործության գործողությունները: Գրողի համար հիմնականը անհոգի աշխարհի ու մարդու հոգու երկնային թռիչքների հակադրությունն է: Պարզվում է՝ մարդն ու աշխարհը ոչինչ չեն սովորել անցած հազարամյակների ընթացքում: 1942-ին, երբ գրողը գրում էր այդ ստեղծագործությունը, իսկապես թվում էր՝ «էս աշխարհը կը փլի»,[6] ինչպես վերնագրել է Համաստեղը իր պատմվածքներից մեկը: «-Էս աշխարհը կը փլի»,- կրկնում ես գրողի խոսքերը, բայց Քրիստոսը սեր է: Սերը չի կործանում, հույս է ներշնչում, որ աշխարհը, մարդիկ դեռ կհասկանան կատարվածը, կգտնեն փրկության ճամփան: Այն ճամփան, որից չեն շեղվում Համաստեղի՝ աշխատանքի ու բարության անձրևով ողողված գյուղի բնակիչները:

Գրողին հետաքրքրում է ոչ թե հերոսների ազգային պատկանելությունը, այլ աշխարհի ու մարդկանց նկատմամբ վերաբերմունքը: Բարոյականի ու ոչ բարոյականի հակադրության մեջ նա առավելությունը տալիս է երազով, հեքիաթով ապրող մարդկանց, որոնք հեռու են շահի ու հաշվենկատության վարակից, ճիշտ է, նրանք չեն էլ գիտակցում, բայց իրենց թույլ ուսերին են տանում աշխարհի, մարդու «մարդացման» ծանր բեռը: Պատմական ճակատա-

գրի բերումով այդ մարդկանցից շատերը հայրենիք ու հող կորցրած, բայց աշխատանքի ու հողի պաշտամունքով ապրող հայեր են:

«Հայաստանի լեռներու սրնգահարը»[7] երաժշտական դրամայի հերոսների պես հայերից շատերն ապրում են Ամերիկա կոչված (կամ աշխարհի ցանկացած վայրում), բայց չեն կորցրել երազելու, երազով ապրելու ունակությունը, որը քչերին է տրվում: Երազը մարդու գոյության ամենակարևոր պայմաններից է, եթե չենք ուզում համատարած մեքենայացման, ավտոմատացման շրջապտույտի մեջ անվերադարձ կորցնել մարդու աստվածային ծագման և աստվածային էության իդեալը, որից մարդը շատ հեռու է ու շարունակում է հեռանալ,- ահա այն եզրակացությունը, որ կատարում է Համաստեղը:

«Սպիտակ Ձիավոր»[8] դյուցազնավեպը գյուղի կյանքի համայնապատկերն է, աշխատանքի ու հողի, տիեզերական բարության օրենքներով ապրող հայ մարդու և ուժի օրենքով գոյատևող աշխարհի հակամարտության պատկերը: Հեռու մնալով նեղմիտ ազգայնամոլությունից՝ գրողը ներկայացնում է հեքիաթային փյունիկի պես կրակներից բազմիցս հառնած հայի ու ազատ Հայաստանի իր պատկերացումը, որի համար կռվում ու նահատակվում են վեպի հերոսները: Դյուցազնավեպի գլխավոր հերոսն ազատամարտի ելած հայ ժողովուրդն է, որին առաջնորդել ու ղեկավարել են կուսակցական գործիչներ: Վեպը, որպես մեր ազգային անհեռատես մտածողության, գործունեության արմատների և հետևանքների քննության փորձ, շատ արժեքավոր է, եթե մի պահ անգամ անտեսենք ստեղծագործության անուրանալի գեղարվեստական արժանիքները:

Հայ գրողն ուզում է, որ մարդն ապրի միայն արարման, աշխատանքի օրենքներով, բայց աշխարհն ունի ապրելու իր պարտադրանքը, և մարդ-հող՝ պորտալարի պես կենսատու կապի մեջ մխրճվում է ուժն իր իրավունքով: Նա մարդու և աշխարհի փոխհարաբերության քննության ժամանակ տարբերակում է ուժի, զենքի դիմելու հարկադրանքի առաջ կանգնած գյուղաշխարհը՝ իր առասպել դարձած հերոսներով, և ուժի օրենքով ապրող մնացած աշխարհը: Պատմության դասերից գրողը քաղում է միակ ճիշտ եզրակացությունը՝ հայի և հայության գոյությունը հնարավոր է միայն պետական համակարգում. ինչպես էլ կոչվի այդ պետությունը, հայի երկիր է՝ իր անցյալով, ներկայով ու անպայման

հուսալի և հուսադրիչ ապագայով: Սպիտակ Ձիավորը այդ երազանքը սրտում մարտի դաշտում ընկած ազատամարտիկների կյանքի ու պայքարի խորհրդանիշն է:

Համաստեղը «Սպիտակ Ձիավոր» վեպում իրարից շատ տարբեր և հայ ազատամարտիկի նկարագիրն ամբողջացնող հերոսների կերպարները կերտում է խնամքով մեկ-երկու մանրամասնով ներկայացնելով հերոսի «կեսնագրական» կարևոր տվյալները: Մնացածը կատարվում է ընթերցողի աչքի առաջ, և եզրակացությունը մնում է նրան: Համաստեղն առաջիններից մեկը ներկայացրեց ազատամարտիկին՝ «իր կյանքի միակ պայմանից՝ ազատությունից»[9] զրկված հային: Տարբեր են ֆիդայիների խառնվածքները, ճակատագրերը, բայց նույնն է զենք վերցնելու հարկադրանքը, նույնն է խոնարհումը համամարդկային, ազգային արժեքների ու գաղափարների առջև: Բռնության դեմ զենք վերցրած հայը, իսկապես, «ուրիշ ազգ մըն էր եւ բնաւ չէր հիշեցներ այն խոնարհ հայը, որ թուրքի մտրակին տակ գլուխ կը ծռէր»:[10] Ֆիդայու բազուկներում կա, ապրում է հայրերի ուժն ու զենք գործածելու հմտությունը, բայց հայն իր ներքին դիմադրությունը հաղթահարելով է զենքի դիմում, նրան խորթ են արյունհեղության հայտնի օրենքներն ու միջոցները:

Արջ Սաքոն, ծերունի Մուրատը, «վայրի ու խիստ ասպետ» Մարգարը, Սերոբը, Խեչոն, Վարդանը և նրանց ընկերները տառապանքի ու կյանքի անգութ հարվածների տակ չեն փոխել հայ մարդու իրենց ազնվական նկարագիրը: Այդ «խենթերի» կռիվը արդար է ու արդարացի, բայց մի բուռ խենթերով հնարավո՞ր է լուծել միջազգային ամենատարբեր ատյաններում չարչրկված ու այդպես էլ լուծում չգտած պահանջատիրության խնդիրը: Հարց, որի մասին Համաստեղը չէր կարող չխոսել վեպում: Ճիշտ է, Վարդածորի կռիվները հերոսական են, բայց հայ գյուղն ու գյուղացին ինչքա՞ն պիտի ապրեն լեռներում՝ կտրված հողից ու աշխատանքից: Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ ո՛չ երիտթուրքական տխրահռչակ շարժումը, ո՛չ ազատության ու հավասարության մասին կարգախոսները, ո՛չ մեծ տերությունների «օգնությունը» ոչինչ չեն տալու մեր ժողովրդին:

«Սպիտակ Ձիավոր» վեպը Համաստեղի գրական սխրանքներից է: Հայ գրականության «ամենախիտ բնակեցված» վեպերից մեկում ոչ մի կերպար չի

կրկնվում, ու հերոսներից շատերը (գլխավոր դեմքերից սկսած մինչև մեկ-երկու տեսարանում հայտնվողները) հասցված են տիպականացման աստիճանի: Անգամ Մարտիկը, որին այնքան քիչ ենք տեսնում վեպում, բայց որը դարձել է ազատամարտի դրոշակակիր:

«Գյուղի», «Անձրևի», «Սպիտակ ձիավոր» վեպի հերոսները «Այծետոմար»[11] երգիծական պոեմում մասնակցում են բարի և չար ոգիների պայքարին ու կործանվում: Հայի ազգային նկարագրի անբաժանելի մասն է կեցության գաղտնիքների որոնումը, և ճակատագրի բերումով մեր ժողովրդին է բաժին ընկել տառապանքով իմաստնանալու դառը փորձությունը, ինչպես նաև դրանից ոչ մի դաս չքաղելու համառությունը:

Քննելով մեր ազգային կյանքն ու հոգեբանությունը՝ Համաստեղը պոեմում խոսում է սխալների, արատների մասին՝ փայփայելով մարդու իդեալը: Քանի դեռ մարդը ենթարկվում է երկրային գոյության՝ իր համար սահմանված կարգին, նրա գոյությունը տանելի է, բայց բավական է՝ նա փորձի անցնել իր համար նախագծված սահմանները, սկսվում է զավեշտը: Փոխվում են արժեքները, խախտվում է ներդաշնակությունը, չարն ու բարին միախառնվում են, և տեղի է ունենում անգամ ամենաանմարդկայինը՝ «աւազակներուն յանցանքով կը խաչուի նաեւ Քրիստոսը...»:[12] Սա է մարդու՝ երազը, պատրանքը իրականության տեղ ընկալելու փորձերի տխուր հետեվանքը: Փաստորեն զուր են ոգիների՝ մարմնական, նյութական աշխարհին երազի կախարդանք հաղորդելու ջանքերը, քանզի դրանցով մարդն արհեստականորեն կտրվում է իր բնական տարերքից՝ բնությունից, փորձում հասկանալ նրա գաղտնիքները, մեկնել հանելուկներ, որոնցից շատերն ինքն է առաջադրել՝ դրանց լուծման անհնարինության հմայքով, կախարդանքով լցնելով երկրային գոյության իր բաժինը:

Մարդը չի բավարարվում իրեն տրված շնորհով ու փոխանակ ապրի՝ երջանիկ լինելով պարզապես իր գոյության փաստով, անվերջ փնտրում է, պեղում գաղտնիքներ, որոնք իմացության՝ նրան տրված սահմաններում լուծում չունեն: Այդ գաղտնիքների բանալին մարդու հոգում է, դրանց փնտրտուքն իրենից դուրս բանական արարածին հետ է տանում դեպի կենդանական գոյություն, և մարդու կյանքը նմանվում է խաղի ... իր պոչի հետ: Այծը մարդու

ներսում հարատևող չարի մարմնավորումն է, ուստի պոեմի հերոսների՝ այծին բռնելու բոլոր ջանքերն ի սկզբանե անիմաստ են: Ճիշտ է, հեգնանքը, հումորը, սատիրան ստեղծում են խաղի տպավորություն, բայց պոեմի փիլիսոփայական ենթատեքստը դրանից չի տուժում:

«Այծետոմարի» գյուղն անուն ունի՝ Չոր: Երգիծելով ինչպես համագյուղացիների, այնպես էլ մարդկության՝ երկնքի բաց դռները թակելու փորձերը՝ գրողը ներկայացնում ազգային դյուցազներգության նոր տարբերակ: Աշխարհում չկան, աշխարհի համար անհասկանալի են մեր ազգային ռոմանտիզմը՝ չեղածը իրականի տեղ ընդունելն ու նրա ոգով թելադրված վարքագիծը, որոնց հետևանքով մի գյուղ (այլ խոսքով՝ երկիր, ժողովուրդ) բնաջնջվում է:

Հիմա՝ տասնամյակների հեռվից, պարզ երևում են անցյալի սխալներն ու վրիպումները: Համաստեղն առաջիններից մեկ էր այդ ամենը տեսնում ու հասկանում: «Այծետոմար»ում գրողը միավորման կոչ է անում հայությանը՝ խախտելով քաղաքական, կուսակցական արգելքները: Համաստեղ մարդը, գրողը գյուղից անբաժան է, ու համագյուղացիների ծաղրանկար «Այծետոմար»ը շնչում է սիրով ու ցավով: Գրողը երգիծում է ոչ միայն մարդկության «հերոս» ստեղծելու ու նրան հետևելու անմտությունը, այլև ներկայացնում մեր ազգային կյանքի՝ զավեշտից մինչև ողբերգություն հասնող ճշմարիտ պատկերը:

Չոր գյուղի (այլ խոսքով՝ աշխարհի) պատկերը լրացնում է Համաստեղի «Քաջն Նազար»[13] հեքիաթը: Աշխարհն ու մարդիկ ապրում են ուժի օրենքներով, և զարմանալի ոչինչ չկա, որ հենց նրանք հորինեցին Նազարի ամենահաղթ ուժի մասին առասպելն ու հերոսին հասցրին գահին: Նազարի թագավոր դառնալը յուրատեսակ պատիժ է աշխարհին ու մարդկանց, որոնք պարբերաբար ինքնախաբեությամբ իշխանության են հասցնում հերթական «ամենահաղթ հերոսին», չունեն լավն ու վատը, չարն ու բարին իրարից բաժանելու, հասկանալու, գնահատելու չափանիշներ: Թագավոր Նազարը աշխարհի և մարդկության ծաղրանկարն է՝ աշխարհի չափ հին ու դժբախտաբար նրան միշտ ուղեկցող: Քանի դեռ մարդու, մարդկության չափանիշը ուժը և ուժի մասին առասպելն են, նազարները վախենալու ոչինչ չունեն. հարկավոր է պարզա-

պես լռել ու նյութ տալ մարդկանց հարուստ երևակայությանը: Մնացածն արդեն հայտնի է. չէ՞ որ մարդիկ իրենց փորձից ոչ մի դաս չեն քաղում:

Չոր գյուղի հերոսներից ամեն մեկն էլ կարող էր հայտնվել Նազարի թագավորական գահին, եթե ... բախտը բերեր:

Համաստեղը կռվից ու եղեռնագործ մարդու ոճիրից տառապող հայ ժողովրդի անունից է դիմում մարդուն ու մարդկությանը: Աշխարհը ձևացնում է, թե ապրում է բարության, մարդասիրության օրենքներով, արյուն է հեղում՝ հանուն խաղաղության և եղբայրության, բայց իրականում ամեն ինչ այլ պատկեր ունի: Գրողը հայի ներողամտությամբ ու անհիշաչարությամբ քննում է մարդկության՝ վերջին երկու հազարամյակների պատմությունը՝ փորձելով մարդուն հեռու պահել չարից ու չարիքից, իսկ մեծագույն չարիքը պատերազմն է: Համաստեղը համառ ու անկոտրում հավատով է նայում մարդուն, նրա անցյալին և ապագային՝ նրան նվիրելով «Աղօթարանը»:[14]

Այս գողտրիկ ստեղծագործությունը ներկայացնում է 22 աղոթքներ, որոնք միահյուսվում ու լրացնում են մարդու սրտի չափ փոքր ու մարդու զգացմունքների պես անծիր տիեզերքի գովքը: Նա գովերգում է ստեղծարար ոգին՝ մարդուն հավիտենականությանը կապող, երկնայինի հետ նրա անխախտ կապը հաստատող ու սրբագործող ուժը: Աներկբա է Համաստեղի հավատը, բայց մարդկային ու հասկանալի է ամեն ինչ իր զգայարաններով, սրտի ճանաչողությամբ ընկալելու ձգտումը: Մարդու ես-ի մեջ նա տեսնում է Աստծո արտահայտությունը: «Աղօթարան»ի հեղինակը ներկայացնում է սեփական կենսափորձով ձեռք բերածը՝ երբեք չպարտադրելով իր ճանաչած կանոններն ու սկզբունքները: Նա լավ գիտե՝ յուրաքանչյուր մարդ անցնում է դեպի երկինք տանող ճանապարհի՝ իրեն հատկացված մասը, կարևորը մարդու և երկնքի կենդանի կապն է, մնացածը ձեռք է բերվում որպես փորձի արդյունք ու հետևանք:

Ինքնաճանաչողության ճամփան մարդուն անխուսափելիորեն տանում է դեպի երկինք, օգնում երկրի վրա ապրել մարդու լիարժեք կյանքով: Սա է հավերժությունից մարդուն տրվածը: Հավատավոր մարդը ոչնչից չի վախենում, իսկ վախկոտը սարսափում է նույնիսկ ... կյանքից: Աստծո նման կատարյալ լինելու ձգտումն ուղեկցում է մարդուն, թևավորում նրա հոգին, կապում նրան

հավերժությանը: «Աղոթարան»ում մարդու, բնության, կնոջ գովքը ծուլվում է Աստծուն ուղղված անկեղծ ու սրտաբուխ աղոթքներին, որոնք պոկվում են գրողի ալեկոծ հոգուց ու թռչում դեպի երկինք:

Համաստեղի նպատակը հավատը քննելը չէ. «Աղօթարանը» նրա հոգու ինքնակենսագրությունն է՝ օրագրի անկեղծությամբ, անմիջականությամբ գրված: Գրողը լուծումներ չի փնտրում, պարզապես ներկայացնում է մարդուն դեպի մարդը (որ նույնն է, թե դեպի Աստված) տանող ճանապարհը՝ կրկին հավաստելով մարդու՝ երկնային ծագումը: Համաստեղի բանաստեղծական ե-րևակայության թռիչքը հասնում է երկինք, բայց միշտ հենվում է հողին. արարող մարդն է նրա չափն ու չափանիշը, որով քննում է գոյության իմաստասիրական հարցերը:

«Աղօթարանի» քնարական հերոսը Համաստեղի գյուղի բնակիչներից մեկի՝ քաղաքակիրթ աշխարհում ապրող սերնդի մարդկանցից է, որը պեղում է պապերից ժառանգած աստվածավախության արմատները: Գործողությունները (եթե փորձենք քնարական պոեմում գործողություններ գտնել) կատարվում են գյուղում՝ նույն այն գյուղում, որը գրողի առաջին գրքում անուն չունի (ավելի ճիշտ՝ հավաքական անուն ունի՝ Գյուղ), «Սպիտակ Ձիավոր» վեպում Բերդակ կամ Վարդածոր է կոչվում, իսկ «Այծետոմար» պոեմում՝ Ձոր: Քաղաքի ու քա-ղաքաբնակ մարդու հետ «Աղօթարանն» առնչվում է այնքանով, որ Համաստեղի հերոսն ապրում է (ավելի ճիշտ՝ գոյատևում) քաղաքում, բայց անհաղորդ է այդ միջավայրին, չի ուզում ու չի կարող ապրել նրա օրենքներով: Մի խոսքով՝ գյուղացի է արմատներով, կյանքից դուրս և կյանքն իմաստավորող երազից, հողից է քաղում կենսահյութեր ու շնորհակալ է երկնքին, խոնարհվում է նրա անհիմանալի մեծության առաջ հենց թեկուզ միայն նրա համար, որ իր գոյությամբ հաստատում է իր տեսակի գոյության փաստն ու իրավունքը:

Համաստեղը պանթեիստ չէ, չնայած նրա կրոնազգացողությունը շփման եզրեր ունի պանթեիզմի հետ: Նա չի նույնացնում Աստված և բնություն, կենդանի ու անկենդան բնության մեջ տեսնում, ճանաչում է աստվածային էության առանձին տարրեր՝ որպես Աստծո գոյության հաստատում, ապացույց: «Աղոթարան»ում բնության գովքի անբաժան մասն է հայրենի բնաշխարհի կարոտը: Այս առումով հետաքրքիր է նաև «Հայաստանի լեռներու

սրնգահարը»[15] երաժշտական դրաման, որի հերոսը՝ Վարդանը, սրնգի հոգեթով երգով պանդուխտ հայերին կապում է հայրենիքի հետ, ավելին՝ իր նման անուղղելի հավատավորներին նույնիսկ հայրենիք է վերադարձնում՝ կտրելով օտար աշխարհի օտար միջավայրից:

Գյուղը Համաստեղի սերն էր՝ «Առաջին սերը»,[18] ինչպես վերնագրված է նրա վերջին ստեղծագործությունը: «Սպիտակ Ձիավոր» վեպում, կոտորածի ու տեղահանության դեպքերին առնչվող պատմվածքներում, «Առաջին սերը» վիպակում Համաստեղը խուսափում է արյունոտ տեսարանների ուղղակի նկարագրությունից՝ հավատարիմ մնալով գեղագիտական մի հիմնական սկզբունքի՝ Բարուց դուրս ամեն ինչ անցողիկ է ու հիշատակության արժանի չէ: Հային հատուկ մարդասիրությամբ՝ տառապանքների ծովով անցած Վահրամը անեծք չունի ոչ ոքի հանդեպ, շնորհակալ է երկնային պարգևի՝ Մարանի սիրո ու այդ սիրո հիշատակով ապրելու երջանկության համար:

Աշխարհն ապրում է «մարդը մարդուն գայլ» գազանային օրենքով, բայց կա Հայաստան աշխարհը, որտեղ պիտի հավաքվեն հայության թափառիկ հատվածներն ու վերակենդանացնեն մարդկության կորցրած երազները երկնքի, աստվածային սիրո և համատիեզերական բարության մասին: Հայրենիք կորցնելու, թափառ կյանքով ապրելու տխրության մեջ անգամ հայը պահում է հույս ու հավատ, սիրո ու երջանկության փլատակներից, տառապանքից հանում ամենամարդկային եզրակացությունը: Սա է հայի՝ հեթանոսի ուժ և քրիստոնյայի անսահման համբերություն, մարդասիրություն համատեղող մարդու, ժողովրդի հոգու կորովի դրսևորումը: Հայն ապրել ու ապրելու է այսպես, սրանով:

Այս վիպակը գրողի կտակն է իր ժողովրդին, միավորվելու, համատեղ ուժերով հայրենիք ստեղծելու ծրագիրը, որի իրականացմանն է ուղղված Համաստեղի գրականությունը՝ անդրանիկ գրքից մինչև կարապի երգը:

Համաստեղի հերոսները նման են իրենց հոգևոր հարստությամբ, որը բարձրացնում է նրանց շահի ու շահույթի օրենքներով ապրող շրջապատից: Շատերի համար անհասկանալի, երբեմն էլ ծիծաղելի են հայրենի հողի ուժն ու հայրենի լեռների կոշտությունը, հպարտությունն իրենց արյան մեջ պահած այս մարդկանց վարքագիծն ու հոգեբանությունը: Կային նաև ազգային դեմքը կորց-

րած «բացասական տիպեր». բայց գրողին հետաքրքրում են այն հերոսները, որոնք դիմադրում են, զրկանքների մեջ ապրում՝ հոգու խորքում փայփայելով Հայաստան ու հայրենիք՝ հայի համար անանցանելի արժեքները. կարոտը, կորցրածը հետ դարձնելու հույսը ապրում է հայ հողագործի և սերմնացանի հոգում: Այն սերմնացանի, որը Եղեռնի ճամփաներին երազում էր կանաչ արտ ու ցորենի ոսկե սերմ, երազում ու ափի մեջ զգում էր հատիկների ջերմությունը...

Գրողին դառնացնում էր այն հանգամանքը, որ աշխարհում իշխում են ոչ թե արարման, այլ ուժի, իրավունքի օրենքները: Նա պատկերեց նաև ինքնապաշտպանության հարկադրանքով զենք վերցրած հողագործին, որի երազն ու երազանքը դարձյալ հողն է ու աշխատանքը: Ապրելով հայրենիքից հեռու՝ Համաստեղն իր գրականությամբ աշխարհասփյուռ հայությանը վերադարձրեց կարոտի, երազի գույներով ներկված պապերի երկիրը, որի մի պատառիկը կա աշխարհի քաղաքական քարտեզի վրա: Դա հայի ու հայության հայրենիքն է, որի գոյության պայմաններից մեկն էլ անցյալի իմացությունն է, նախապապերի երկրի՝ արյան հոսքով կենդանի մնացած հիշողությունը: Հայը Համաստեղի համար տառապած, բայց տառապանքից ոչ թե չարացած, այլ իմաստնացած մարդն է, որն ապրում է համամարդկային արժեքներով:

Համաստեղի երկերում միջավայրը, եթե գյուղը չէ կամ գյուղը հիշեցնող ինչ-որ բնապատկեր, տեսարան, սոսկ գործողության վայր է՝ պայմանական ու ինչ-որ առումով՝ անդեմ, անորոշ: Գրողն աշխարհից անջատում է իր հերոսների բնօրրանն ու մնացածը դիտարկում որպես տարագիր հայի գոյության վայր՝ երբեմն անուն ունեցող՝ Ամերիկա, ավելի հաճախ՝ պարզապես ակնարկվող տեղ: Համաստեղի ուշադրության կենտրոնում մարդու ապրումներն են, այսպես ասած «փոքր մարդու» ներաշխարհում կատարվող խոշոր բեկումներն ու տեղաշարժերը: Նրա պատմվածքները դրամատիկ պատկերներ են՝ «ներքին» գործողությամբ, որը ծնվում է հերոսների հույզերից, ապրումներից:

Համաստեղի դրամատիկական փորձերը առավելապես աչքի են ընկնում հոգեբանական ենթաշերտերով, և նրա այդ երկերի թուլությունը ծագում է ոչ թե ժանրի չիմացությունից, այլ «ներքին» գործողությունից, որը չի համադրվում ժանրի պահանջներին: Ամենատարբեր ճակատագրերի ու նկարագրի տեր տասնյակ հերոսներ են ապրում Համաստեղի գրականության

էջերում, և ընթերցողը տեսնում է նրանց հուզաշխարհի ամենաբազմազան, չկրկնվող դրսևորումները:

Գյուղաշխարհն ապրում է Համաստեղի դավանած գեղագիտական օրենքներով, որոնք ծնվում են իրականությունից, անցնում վերհուշի երկնային ոլորտներով և վերադառնում իրենց ակունքներին՝ քնարական շնչով լեցուն ու շոշափելիության աստիճան կենդանի: Այս իրական հեքիաթից են գալիս գրողի՝ հողի շնչով ապրող հերոսները: Համաստեղի գրականությունը կրկին հաստատում է՝ աշխարհի և մարդու ներդաշնակությունը ծնվում է հողից, իսկ երբ խախտվում է այդ կապը, մարդու գոյությունը ողբերգություն է դառնում: Նրա գրականությունը մարդու և հողի, մարդու և երկնքի ներդաշնակության ձոն է: Աշխարհասփյուռ հայությունը ապրեց ու ապրում է նաև Համաստեղի գրականությամբ:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Հայաստանի Կոչնակ», 1921, թիվ 1: Այս շարքը տպագրված է նաև «Նայիրի» հանդեսի՝ 1941-ի Ա պրակում:
2. Լույս է տեսել 1924-ին, Բոստոնում:
3. Լույս է տեսել 1929-ին, Փարիզում:
4. «Զուարթնոց» (Փարիզ), 1929, թիվ 6:
5. Լույս է տեսել «Հայրենիք» ամսագրի՝ 1942-ի թիվ
6. «Յառաջ» (Փարիզ), 1928, 29.09-02.10:
7. «Հայրենիք» ամսագիր, 1944, թիվ 6:
8. Վեպի առաջին գլուխները լույս են տեսել «Հայրենիք» ամսագրում՝ 1931-1933 թթ., առանձին գրքով լույս է տեսել 1952-ին, Լոս Անջելեսում:
9. Դ.Դեմիրճյան, Երկերի ժողովածու 14 հատարով, հ. XIV ; Ե., 1987, էջ 463:
10. Կ.Սասունի, «Լեռներու Ասլանը», Պէյրութ, 1968, էջ 185:
11. Պոեմը «Տոմար մաքիական կամ Սրբազան կատակերգություն» վերնագրով լույս է տեսել «Հայրենիք» ամսագրում՝ 1938, թիվ 4-9: 1961-ին պոեմը Բեյրութում հրատարակվել է առանձին գրքով՝ «Այծետոմար» վերնագրով:
12. «Այծետոմար եւ ուրիշ բանաստեղծություններ», Պեյրութ, 1961, էջ 6ա:
13. Լույս է տեսել «Հայրենիք» ամսագրում՝ 1940, թիվ 9:
14. Տպագրվել է «Հայրենիք» ամսագրում՝ 1950, թիվ 1-3 և 5:
Առանձին գրքով լույս է տեսել Բեյրութում՝ 1957-ին:
15. Լույս է Բեյրութում, 1966-ին: